

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ
12 մայիսի, 2020 N 16**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝ **ո ռ ո շ ու մ է մ**.

1. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն, Եղեգնուտ, Ծար, Նոր Վերինշեն, Նոր Կարաչինար, Նոր Մանաշիդ, Նոր Խարխափուտ և Քնարավան համայնքներում կիրառել հետևյալ սահմանափակումները.

1) Սահմանել Շահումյանի շրջանի Քարվաճառ, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն, Եղեգնուտ, Ծար, Նոր Վերինշեն, Նոր Կարաչինար, Նոր Մանաշիդ, Նոր Խարխափուտ և Քնարավան համայնքների վարչական սահմանները ներառող ընդհանուր տարածք մուտք գործելու և ելք կատարելու հատուկ ռեժիմ՝ արգելելով անձանց և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության ապրանքների, պարագաների, սննդամթերքի, դեղորայքի, վառելիքի մատակարարման նպատակով անձանց տեղաշարժի (սույն որոշման Հավելվածով սահմանված տեղեկությունները պարունակող՝ Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարի կողմից տրամադրված թերթիկի առկայության դեպքում), Դրմբոն-Վարդենիս ավտոճանապարհով ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության և Պարետի ցուցումով՝ բացառիկ այլ դեպքերի.

2) Հատուկ ռեժիմի իրականացումն ապահովելու նպատակով ԱՀ ոստիկանության կողմից սահմանված վայրում տեղադրել հատուկ անցակետ՝ անձանց ու տրանսպորտային միջոցների շարժը վերահսկելու նպատակով.

3) Սույն կետի 2-րդ ենթակետում նախատեսված անցակետում ԱՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տեղադրել հսկիչ կետ՝ ԱՀ Պարետի 2020 թվականի ապրիլի 13-ի N 1 և 2020 թվականի ապրիլի 20-ի N 8 որոշումների պահանջների կատարումն ապահովելու նպատակով.

4) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված՝ Դրմբոն-Վարդենիս ավտոճանապարհով ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության վերահսկման նպատակով ԱՀ ոստիկանության կողմից համապատասխան համայնքների ներսում սահմանել վերակարգեր և բացառել երթևեկող տրանսպորտային միջոցների կանգ առնելը համայնքների վարչական սահմաններում:

2. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:

3. ԱՀ ոստիկանության պետին՝ երկօրյա պարբերականությամբ Պարետին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ:

4. ԱՀ առողջապահության նախարարին, ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին, ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին, ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին, ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարին, ԱՀ Շահումյանի շրջանի Քարվաճառ, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն, Եղեգնուտ, Ծար, Նոր Վերինշեն, Նոր Կարաչինար, Նոր Մանաշիդ, Նոր Խարխափուտ և Քնարավան

համայնքների ղեկավարներին՝ օժանդակել ԱՀ ոստիկանության՝ սույն որոշմամբ սահմանված գործառույթների կատարմանը:

5. ԱՀ Պարետի 2020 թվականի մայիսի 7-ի «Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Վերինշեն համայնքում և Քնարավան համայնքի Չափնի գյուղում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների մասին» N 13 և 2020 թվականի մայիսի 8-ի «Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Բրաջուր համայնքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների մասին» N 14 որոշումներն ուժը կորցրած ճանաչել:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունիսի 6-ին՝ ժամը 14:00-ին:

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

| Տեղաշարժման թերթիկ | |
|--|--|
| « ----- » մայիսի 2020թ. | |
| Անուն, ազգանուն | |
| Ելքի օր | |
| Ելքի հասցե | |
| Այցելության վայրի հասցե և անվանում | |
| Այցելության նպատակը | |
| Վերադարձի ակնկալվող ժամը | |
| ԱՀ Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավար _____ | |